





ստեղծագործութեան համար, որը կատարուած էր միանգամայն այլ սկզբունքներով՝ ակադեմիայի պահանջները բաւարարելու համար: Դրանից առաջ եւ յետոյ նա ոչ մի անգամ չի անդրադարձել ակադեմիական սկզբունքներին: Յովնաթանեանը խորապէս ազգային երեւոյթ է: Եւ միանգամայն օրինաչափ է ազգային ձեւերի ու ըմբռնումների որոնման լայն ճանապարհ դուրս եկած նկարչական նոր սերունդի մեծ հետաքրքրութիւնը իր կենդանութեան ատեն մոռացուած նկարչի ստեղծագործութեան հանդէպ:

Յովնաթանեանի համար հինը անվերադարձ կերպով հեռացած պատմութիւն էր, այլ շարունակուող, ավրող իրականութիւն, այնպէս, ինչպէս ամէն մի հայի համար իր ժողովրդի պատմութիւնը կարծես իր սեփական կենսագրութեան մի մասն է, որ այդ ինքը երէկ պարտութիւն կրեց Տիգրանակերտի տակ կամ գնաց Աւարայրում նահատակուելու: Սակայն Յովնաթանեանի մօտ միանում են հինն ու նորը, որպէս գեղադիտական ձեւամտածողութիւն, իրականն ու վերացականը, նիւթականն ու խորհրդապաշտականը՝ որպէս վերաբերմունք եւ մտածելակերպ, արեւելքն ու արեւմուտքը, որպէս էութիւն, տալով նրա արուեստին ջերմութիւն՝ առանց քաղցրութեան, զգացականութիւն՝ առանց զգայասիրութեան: Եւ այդ բոլորը մէկ միասնական ամբողջութեան մէջ, ոչ թէ որպէս վերապրուկ, տեսանքի ազդեցութիւնների մեքենական գումար, այլ որպէս օրգանական համադրութիւն, որի բաղկացուցիչները տարրալուծելու համար պէտք է յետ գնալ հայ մշակոյթի զարգացման բոլոր օղակներով: Հայ արուեստի գործօն կողմը Յովնաթանեանի ստեղծագործութեան մէջ հանդէս է գալիս նպատակի, կատարման ձեւերի ու բովանդակութեան տրամաբանական ու կուռ միասնութեան մէջ: Նրա պատկերներում չկայ ոչ մի աւելորդ, չարդարացուած մանրամասնութիւն, գեղեցկացման ու արուեստականութեան ոչ մի հետք: Պատուիրատուն ցանկացել է ունենալ դիմանկար իր հազուատով, արդուզարդով եւ այլն, եւ նկարիչը ստեղծել է այն, նշելով ամենակարեւորը: Սա արհեստ է, հանձարի ուժով բարձրացուած արուեստի աստիճանի: Նկարիչը բարեխրդնութեամբ ու վարպետօրէն պատկերել է ոչ միայն դէմքը, հագուստն ու արդուզարդը, պատկերողի հոգեվիճակն ու բնաւորութիւնը, այլ եւ միաժամանակ արտայայտել է իր վերաբերմունքը դէպի մարդն ու իրականութիւնը, իր յոյզերն ու զգացմունքները:

Նատալիա Թէոմեանի դիմանկարում պատկերուած է ոչ այնքան գեղեցիկ երիտասարդ մի կին, համարեայ ոչնչով աչքի չընկնող: Բայց կտաւի սառը, Թափանցիկ մոխրագոյն խորքի վրայ մեր առջեւ յառնում է նրբագեղ ու սլացիկ մարմնի ուրուագիծը՝ պարուրուած սեւ զգեստով, որը փոքր ինչ խախտուած համաչափութիւնների պատճառով առաւել սլացիկ է թուում: Աննշմար ու խորհրդաւոր Թափաղ դէմ-

քին, լայն բացուած երազուն աչքերում գիտակցուած ու չգիտակցուած, անմեկնելի տենչերը հոգու, որքան սովորական, այնքան խորհրդաւոր, որքան իրական, այնքան աննիւթական, հանդարտ ու յուճիկ սահում է նա, միաժամանակ լինելով անշարժ ու կոթողային՝ ճիշտ այնպէս՝ ինչպէս երկնքի խորքի վրայ կարծես սահում է հպարտ ու սլացիկ Մարինէ եկեղեցին: Անցեալ դարի Թիֆլիսի այդ սովորական բնակչուհու դիմանկարի մէջ նկարիչը դրել է իր երազանքներն ու գեղեցիկի գաղափարականը: Պատկերը կերտուած է արտակարգ պարզ ու ժլատ միջոցներով, գործածուած է ընդամէնը չորս գոյն՝ սեւ, ըսպիտակ, չնչին քանակութեամբ կարմիր եւ կապոյտ, բայց ոսկերչական նրբութեամբ ու ճշտութեամբ: Այդպէս իր նախնիները կառուցել են տաճար, հասարակ քարից ստեղծելով յաճախ փոքրիկ ու անպաճոյճ, առանց չքեղ զարդարանքների մի շինութիւն, ուր պատը միաժամանակ կատարում է կառուցանողական եւ գեղարուեստական դեր: Արդիւնքը եղել է արուեստի կատարեալ մի յուշարձան, որի մէջ արտայայտուել է ստեղծող ժողովրդի հոգեւոր կերտուածքը՝ նուիրական յոյզերն ու գեղեցիկի գաղափարականը:

Եթէ Յովնաթանեանի նախորդների մօտ մենք տեսնում ենք եւրոպական արուեստից փոխ առնուած շարադրութիւններ, բնականաբար պատուիրակներ, տիպիկ արեւելեան հակում դէպի մանրամասնութիւններն ու պերճութիւնը, զարդարուեստին գեղեցկութեան ձգտում, դարձամօտիւնների յաճախ չարդարացուած առատութիւն, ապա Յակոբ Յովնաթանեանի մօտ չափաւորութեան ու պարզութեան ձգտումը հասնում է ժուժկալութեան: Նայեցէք պարոն Մելիքեանի, պատանի հասնում է ժուժկալութեան: Նայեցէք պարոն Մելիքեանի, պատանի Ալիմեանի կամ նրա բոլոր դիմանկարներին: Ամէն ինչ առուած է այդ մարդկանց մասին, բայց ոչ մի աւելորդ բիծ, եւ բոլոր դիմանկարները կոթողային բնոյթի են: Այդպիսին է նաեւ Յովնաթանեանի՝ Նազելի Օրբելեանի մտերմիկ ու քնարական դիմանկարը: Փոքրամարմին, փխրուն ու նրբակաղմ, անմեղ հաւատով աշխարհին նայող այս բարեհամբոյր երիտասարդ կինը, որ դիտողի առջեւ բացուում է փոքրիկ, լուսաւոր հրաշքի պէս՝ յաւերժական ու հաստատուն մի վերանորոգում, որ հոգեւոր ունի իր մէջ: Նկարիչը իր գործը կառուցել է այնպէս, որ խորքի վրայ նրա նազուկ մարմինն ուրուագծուի որպէս եռանկյունի: Խորքի վրայ նրա նազուկ մարմինն ուրուագծուի որպէս եռանկյունի: Մեծ սիրով ու վարդապետութեամբ են պատկերուած գեղեցիկ դէմքն ու իրար ագուցուած նուրբ, երաժշտական ժանեակներն են և կրծքի բարանքը օձիքի և թեւերի արծաթաւուն ժանեակներն են և կրծքի բարակ ոսկէ շղթան: Որտեղից է գալիս այսքան քնարական ու այսքան խոստաշունչ գեղեցիկի ըմբռնումը, երբ Յովնաթանեանից շատ առաջ Սայաթ-Նովան այնպիսի պերճ ու հրաշքոտ շուայրութեամբ է երգել կնոջը, որ, եթէ պատկերների վերածէինք, պարսկական գունագեղ մանրանկարների թերթեր կը ստացուէին: Բայց միթէ նոյնքան գոյ-



